



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
11.07.2023Թ.

Համայնքի ավագանու նիստին ներկա են ավագանու 22 անդամները:

Բացակայում են Մելիք Գասպարյանը, Տարոն Եփրեմյանը, Գառնիկ Սահակյանը, Գարիկ Պալյանը և Դավիթ Պապոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական Վ.Զիլինգարյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Գ.Աֆյանը, Բ. Բալբաբյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը՝

- 1) Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
- 2) Չարենցավան համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝

Կողմ-13

դեմ - 0

ձեռնպահ -9

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Չեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի. **առաջարկում եմ.**

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Չարենցավան համայնքի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ավագանու անդամ Ա.Գալստյանը հարց բարձրացրեց համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ, հետաքրքրվեց նաև համայնքի բնակիչներին սոցիալական օգնություն հատկացնելու գումարների չափերով:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 13

դեմ- 3

ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:

/Չեկ. Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝ **առաջարկում եմ.**